

ՔԱՐԻՆ ՖՈՍՏԻՄ

ՄԻ ՀԵՌԱՑԻՐ



Գ Ի Տ Ա Ն Ք

Երևան 2014



Elskede Poona, Karin Fossum

Ֆոսում, Քարին

Մի հեռացիր - Եր.: Գիտանք, 2014 - 296 էջ.

Չնդկաստանից բերած կնոջ հետ նորվեգացու սիրո պատմությունը երկար չտևեց դաժան սպանության պատճառով: Ո՞վ է սպանել հնդկուհուն: Ավագ տեսուչ Քոնրադ Սեյերը քայլ առ քայլ վերականգնում է սպանության խճճված պատկերը:

Նորվեգիայի «Քրեավեպի թագուհի» Քարին Ֆոսումը սկանդինավյան քրեավեպի ամենահայտնի հեղինակներից է՝ Ստիգ Լարսոնի, Յո Նեսբոյի, Արլանդուր Ինդրիդասոնի և Յուսի Ադլեր-Օլսենի կողքին: Վերջերս հեղինակը նշվել է քրեավեպի բոլոր ժամանակների 50 մեծագույն հեղինակների շարքում: Բազմաթիվ գրական մրցանակների դափնեկիր է: Նրա վեպերը թարգմանվել են 17 լեզվով և լույս են տեսել ավելի քան 30 երկրում:

ISBN 978-9939-810-26-3

© CAPPELEN DAMM AS 2000

Title of the original edition: Elskede Poona

© *Գիտանք*, հայերեն թարգմանության և ձևավորման համար, 2014

Շան հաչոցը խախտեց լուծւոնը: Մայրը բարձրացրեց գլուխը լվացարանից և պատուհանից դուրս նայեց: Հաչոցը շան կոկորդի խորքից էր գալիս: Նրա սև մկանուտ մարմինը ամբողջովին դողում էր գրգռվածությունից:

Հետո նա տեսավ որդուն: Տղան դուրս եկավ կարմիր *Գոլֆից* և գցեց գետնին կապույտ մարգապայուսակը: Նայեց պատուհանին, որտեղ աղոտ երևում էր մոր ուրվապատկերը: Մոտեցավ շանը և ազատեց շղթայից: Շունը նետվեց նրա գիրկը: Նրանք գլորվեցին գետին՝ փոշի բարձրացնելով: Շունը գոմնում էր, իսկ որդին փաղաքշական խոսքեր էր բղավում նրա ականջին: Երբեմն գոռում էր ամբողջ կոկորդով և ուժգին շապացնում ռոտվելերի դնչին: Ի վերջո նրանք հանդարտվեցին: Որդին դանդաղ ոտքի ելավ: Թափ տվեց տաբատից փոշին ու կեղտը: Նորից նայեց պատուհանին: Շունը վարանելով վեր կացավ ու գլուխը կախ կուչ եկավ նրա առաջ, մինչև որ տղան նրան թույլատրեց մոտենալ ու հնազանդորեն լպստել իր բերանի անկյունը: Հետո որդին տուն մտավ և եկավ խոհանոց:

- Աստված իմ, տես՝ ինչ վիճակում ես:

Կապույտ կարճաթև շապիկը արյունոտ էր. ձեռքերը ծածկված էին ճանկռվածքներով: Շունը նաև ճանկռել էր նրա դեմքը:

- Նման բան երբեք չեմ տեսել, - ասաց մայրը ջղային փնչոցով: - Թո՛ղ պայուսակը: Ավելի ուշ կլվանամ:

Որդին խաչեց կրծքին ճանկռված թևերը: Հզոր թևեր էին, ինչպես և ամբողջ մարմինը: Գրեթե 100 կիլո կկշռեր, և ճարպի ոչ մի նշույլ: Սկանները հենց մոր էին գործի դրվել և տաք էին:

- Հանգստացիր, - ասաց որդին: - Ինքս կանեմ:

Մայրը չէր հավատում ականջին: Ի՞նքն է լվանալու իր շորերը:

- Որտե՞ղ էիր, - հարցրեց: - Վեցից տասնմեկը հո չես աշխատել:

Որդին ինչ-որ բան մռթմռթաց: Մեջքով շրջվել էր:

- Ուլայի հետ էի: Միասին դայակություն էինք անում:

Մայրը նայեց նրա լայն թիկունքին: Որդու մազերը շեկ էին, խո-

զանակի պես ցից-ցից: Մի քանի փոքր մազափունջ ալ կարմիր էին: Կարծես վառվելիս լինեին: Նա ցած իջավ նկուղի աստիճաններով: Մայրը լսեց հին վճացասարքի աշխատելու ձայնը: Բաց թողեց վճացարանի ջուրը և դուրս մայեց բակ: Շունը պառկած էր՝ գլուխը դրած թաթերին: Լույսի վերջին շողերը անհետանում էին: Որդին վերադարձավ ու ասաց, որ ցնցուղ է ընդունելու:

- Այս ժամի՞ն: Չենց նոր ես եկել մարզասրահից, չէ՞:

Որդին չպատասխանեց: Քիչ անց մայրը խուլ ձայներ լսեց սալիկապատված լողասենյակից: Նա երգում էր: Շրխկաց դեղարկղի դուռը: Հիմար տղա. երևի սպեղանու ժապավեն է փնտրում:

Մայրը ժպտաց: Նրա մոլեգին շարժուձևը շատ բնական է: Ի վերջո, տղամարդ է, չէ՞: Չետագայում ինքը երբեք սա չի մոռանա: Երջանիկ կյանքի վերջին պահերը:

* * *

Ամեն ինչ սկսվեց Գունդեր Յոմանի ուղևորությունից: Գունդերը հասավ մինչև Չնդկաստան՝ իր համար կին փնտրելու: Երբ նրան հարցրին, նա չասաց, որ հենց դա էր գնալու նպատակը: Նույնիսկ ինքն իրեն դժվարությամբ էր խոստովանում: Երբ գործընկերները հարցրին, պատասխանեց, որ ուզում է աշխարհ տեսնել: Ի՞նչ արտառոց շռայլություն: Նա երբեք իր համար փող չէր ծախսել: Գրեթե ոչ մի տեղ չէր գնում, երբեք չէր ընդունում հրավերը Սուրբ Ծննդի խնջույքներին, զբաղվում էր իր տնով, այգով կամ ինքնաշարժով: Որքան հայտնի էր, երբևէ կնոջ հետ չէր եղել: Գունդերին ասեկոսեները չէին անհանգստացնում: Նա իրականում վճռական մարդ էր: Դանդաղ, - սա անհերքելի էր, - բայց առանց վարանելու գնում էր այնտեղ, որտեղ ուզում էր: Շտապելու կարիք չուներ: Երբ հիսունմեկ տարեկան դարձավ, երեկոները նստած թերթում էր իր կրտսեր քրոջ՝ Մարիի նվիրած *Աշխարհի ժողովուրդները* վերնագրով գիրքը: Եվ քանի որ երբեք որևէ տեղ չէր գնացել, բացի իր աշխատավայրից, - նա մի փոքր, բայց հաստատուն գործարարություն ուներ՝ գյուղատնտեսական սարքավորում էր վաճա-

ռում, - քույրը հոգաց, որ նա գոնե հնարավորություն ունենա նկարներին տեսնել, թե ինչ է կատարվում մեծ աշխարհում: Գուճնդերը կարդում էր գիրքը և զննում նկարները: Ամենից շատ նրան գերել էր Զնդկաստանը: Ճակատին կարմիր կետերով գեղեցիկ կանայք: Նրանց ներկված աչքերը, հրապուրիչ ժպիտը: Նրանցից մեկը իրեն էր նայում գրքի նկարից, և նա շուտով հայտնվում էր քաղցր անուրջների երկրում: Ոչ ոք նրա պես չէր կարող երազել: Աչքերը փակում էր և թռչում հեռուները: Կարմիր զգեստով կինը փետուրի պես թեթև էր: Նրա աչքերը խորն էին, մուգ, ինչպես սև ապակին: Վարսերը ծածկված էին ոսկեգույն ժանեկազարդ գլխաշորով: Ամիսներ շարունակ Գուճնդերը ակնապիշ նայում էր լուսանկարին: Ակնհայտ էր, որ նա հնդկուհի կին է ուզում: Ոչ այն պատճառով, որ հնազանդ ու ինքնազոհ կին էր ուզում, այլ որովհետև ուզում էր մեկի, ում կարող էր փայփայել ու պաշտել: Նորվեգուհիները չէին ցանկանում, որ իրենց պաշտեն: Զոգու խորքում ինքը նրանց երբեք չէր հասկանում. չէր հասկանում, թե նրանք ինչ են ուզում իրականում: Որքան հասկանում էր, ինքը ոչ մի թերություն չուներ: Ուներ տուն, այգի, ինքնաշարժ, աշխատանք. խոհանոցը լավ կահավորված էր: Լողասենյակի հատակը տաքացվում էր, ուներ հեռուստացույց և տեսագրիչ, լվացքի և չորացնող սարքեր, մանրալիք ջեռոց, բարի սիրտ և փող դրամատանը: Գուճնդերը հիմար չէր. հասկանում էր, որ կան այլ, ավելի վերացական գործոններ, որոնք որոշում են, թե արդյոք մարդը երջանիկ է սիրո մեջ: Սակայն դրանք իր համար անօգուտ էին, քանի որ մի բան էին, որը անհնար էր սովորել կամ զնել: «Քո ժամանակը կգա», - ասում էր մայրը, երբ մահամերձ պառկած էր հիվանդանոցի մեծ մահճակալին: Զայրը արդեն վաղուց մահացել էր: Գուճնդերը մեծացել էր երկու կանանց հետ՝ մոր ու քրոջ: 70 տարեկանում մոր ուղեղում չարորակ ուռուցք առաջացավ, և նա երկար ժամանակի ընթացքում պարբերաբար ինքն իրեն նման չէր: Գուճնդերը համբերատար սպասում էր, որ մայրը կրկին դառնա այն անձը, որին նա ճանաչում ու սիրում էր: «Քո ժամանակը կգա: Դու լավ որդի ես, Գուճնդեր: Կտեսնես՝ մի գեղեցիկ օր քեզ մի կին կհանդիպի»:

Բայց նրան ոչ ոք չհանդիպեց: Ուստի նա ծրագրեց մեկնել Յնդկաստան: Գիտեր, որ դա աղքատ երկիր է: Գուցե ինքը գտնի այնտեղ մի կնոջ, որը չի մերժի իր առաջարկը՝ իր հետ գալու Նորվեգիա, այս գեղեցիկ տունը, որ իրեն է պատկանում: Եթե նրա հարազատները ցանկանան այցելել նրան Նորվեգիայում, ապա ինքը կվճարի նրանց ճանապարհածախսը: Նա չէր ցանկանում ոչ ոքի բաժանել միմյանցից: Եվ եթե այդ կինը ինչ-որ բարդ կրոն է դավանում, ապա ինքը ոչ մի դեպքում նրան չի խանգարի պահպանել դա: Գունդերի պես համբերատար մարդ շատ քիչ կար: Եթե միայն նա կարողանա գտնել այդ կնոջը:

Այլ հնարավորություն էլ կար: Բայց նա չխիզախեց Լեհաստան գնացող հանրակառք նստել ուրիշ՝ անծանոթ մարդկանց հետ: Եվ չցանկացավ Թախլանդ թռչող օդանավ բարձրանալ: Բազում լուրեր էին պտտվում այնտեղ կատարվող բաների մասին: Նա ուզեց ինքնուրույն գտնել իր կնոջը: Ամեն ինչ պետք է ինքը աներ: Գունդերը չէր ցանկանում մատյաններ թերթել՝ կանանց լուսանկարներով ու նկարագրություններով: Ոչ էլ դիտել հեռուստացույցի լուսապաստառին հերթով անցնող, իրենց առաջարկող կանանց: Նա երբեք չէր կարողանա ընտրություն կատարել:

Սնարալամպի լույսը տաքացնում էր նրա ճաղատ գլուխը: Աշխարհի քարտեզին նա գտավ Յնդկաստանը և դրա գլխավոր քաղաքները՝ Մադրասը, Բոմբեյը, Նյու Դելի: Նախընտրեց, որ քաղաքը ծովափնյա լինի: Յնդիկների մեծ մասը խոսում էր անգլերեն, և դա քաջալերեց իրեն: Ըստ *Աշխարհի ժողովուրդները* գրքի՝ նրանց որոշ մասը նույնիսկ քրիստոնյա էին: Ամենաերջանիկ գուգադիպությունը կլինի, եթե ինքը հանդիպի մի կնոջ, ով գուցե քրիստոնյա է և ազատ խոսում է անգլերեն: Տարիքը կարևոր չէր. նա կարող էր լինել քսան կամ հիսուն տարեկան: Գունդերը մտադիր չէր երեխա ունենալ, մեծ հավակնություններ չուներ, բայց եթե կինը երեխա ուներ, նա կընդուներ երեխային որպես գործարքի բաղկացուցիչ մաս: Գուցե կարիք լինի սակարկելու: Այլ երկրներում բազում սովորույթներ կան, որոնք խիստ տարբերվում են. եթե փողի հարց լինի, ապա ինքը լավ կվճարի: Մորից մեծ ժառան-

գություն էր մնացել:

Նախ պետք էր զբոսաշրջության գործակալություն գտնել: Դրանք չորսն էին: Մեկը առևտրի կենտրոնում էր. ընդամենը վաճառասեղան էր, որի մոտ կարող էիր կանգնել՝ որոշ գովազդագրքույկներ գննելով: Գունդերը գերադասում էր նստել: Դա կարևոր էր. շտապ, ոտքի վրա որոշում կայացնելը սխալ կլիներ: Պետք էր գնալ քաղաք, այնտեղ երեք գործակալություն կար: Գունդերը հիշեց, որ մի անգամ նրան գայթակղելու համար Մարին մի գովազդագրքույկ էր թողել նրա տանը: *Նրան շատ բնորոշ է*, մտածեց Գունդերը և աչքի անցկացրեց երկրների ցանկի 3 տառը: Հավայան կղզիներ, Հաիթի: Հնդկաստան չէ՞ն գնում հանգստանալու: Ինդոնեզիայի կղզիներում գտավ Բալին, բայց վանեց այդ միտքը: Կամ Հնդկաստան, կամ ոչինչ: Պետք էր պարզապես զանգել օդակայան և տոմս պատվիրել: Ինչպես միշտ, դա իրեն կհաջողվի. մեծ քաղաքում ուշադիր են ուղևորի հանդեպ: Բայց արդեն երեկո էր, զանգելու համար շատ ուշ էր: Այնպես որ նա նորից թերթեց *Աշխարհի ժողովուրդները* գրքի էջերը: Երկար ժամանակ ակնապիշ դիտում էր գեղեցկուհի հնդկուհուն: Անհմար էր պատկերացնել, որ կիմը կարող է լինել այդքան գեղեցիկ, այդքան ոսկեփայլ ու հաճելի, այդքան սքանչելի ու նրբագեղ: Իր նուրբ ձեռքով նա հավաքել էր գլխաշորը պարանոցին: Դաստակներին զարդեր կային: Աչքի գրեթե սև ծիածանաթաղանթը պեծին էր տալիս, հավանաբար արևից. նա նայում էր ուղիղ Գունդերին: Նրա տենչացող աչքերին: Դրանք խոշոր էին և կապույտ. Գունդերը փակեց աչքերը և ննջեց բազկաթռռին: Կիմը հայտնվեց նրա երազում: Գունդերը ճախրեց երկնքում ոսկեփայլ գեղեցկուհու հետ: Կիմը փետուրի պես թեթև էր: Նրա ալ կարմիր զգեստը փողփողալով շոյուն էր Գունդերի դեմքը: